ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից երկրների պետությունների ղեկավարները տնտեսվարող կազմակերպությունների միջեւ հաշվարկների բարելավման եւ ապրանքների ու ծառայությունների համար փոխադարձ պարտքերի կրճատման նպատակով, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Անհանդուրժելի ճանաչելու բյուջեի եւ այլ պարտավորությունների համար հաշվարկների ձեւավորված իրավիճակը՝ ապրանքների եւ ծառայությունների դիմաց:

Պարտավորեցնել կառավարություններին անհապաղ միջոցներ ձեռնարկելու ֆինանսական իրավիճակի բարելավման համար եւ գործողության մեջ դնելու անվճարունակ ձեռնարկությունների եւ կազմակերպությունների առողջացման եւ սնանկացման մեխանիզմը:

ՀՈԴՎԱԾ 2

Կառավարությունների եւ ազգային (կենտրոնական) բանկերի ղեկավարներին հանձնարարել.

կարգավորել ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսվարող սուբյեկտների պահանջները՝ ներառյալ միջպետական պարտավորությունների փոխադարձ հաշվարկը, համադրելով այն վճարահաշվարկային հարաբերությունների վճարային հաշվեկշիռների մշակման, ազգային տարադրամ մտցնելու հեռանկարի հետ,

սահմանել Անկախ Պետությունների Համագործակցության երկրների կապի ձեռնարկությունների միջոցով հաշվարկների կարգը՝ ժամանակին ապահովելով դրամական փոխանցում ստացողների հաշվարկների համար դրամական միջոցների ստացումը,

ձեռնարկությունների միջեւ մուրհակների կիրառմամբ հաշվարկների մեխանիզմի ներդրման ապահովում, ինչպես նաեւ հեռագրի եւ հաշիվների վճարման արագացման այլ ձեւերի օգտագործումը,

համաձայնագիր կնքել միակ օրինական դրամական միջոցի՝ ռուբլու վրա հիմնված դրամական համակարգի հետագա գործունեության մեխանիզմի եւ ռուբլու գոտում համաձայնեցված դրամավարկային քաղաքականության անցկացման համապատասխան մեթոդների մասին, հաշվի առնելով առանձին պետություններում՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում, ազգային դրամական միավոր մտցնելու հեռանկարը:

Հանձնարարել ազգային (կենտրոնական) բանկերին ընթացիկ տարվա մայիսի 20-ից ոչ ուշ սահմանելու փոխադարձ վճարահաշվարկային հարաբերությունների կարգավորման ժամկետները, սակայն ոչ ուշ ընթացիկ տարվա հունիսի առաջին կեսից:

ՀՈԴՎԱԾ 3

Հաշվարկների ժամանակին անցկացման համար տնտեսվարող սուբյեկտների պատասխանատվության բարձրացման նպատակով սահմանել տույժ առաքված ապրանքների եւ ցուցաբերված ծառայությունների դիմաց ոչ ժամանակին հաշվարկների համար՝ վճարման ուշացման յուրաքանչյուր օրվա համար առնվազն 0,2%-ի չափով:

ՀՈԴՎԱԾ 4

Ֆիկտիվ (կեղծ) փաստաթղթերով (ավիզո) գործողությունների անցկացման կանխարգելման նպատակով ռուբլու գոտու մեջ մտնող պետությունների կենտրոնական (ազգային) բանկերը առեւտրային բանկերի թղթակցային հաշիվներին միջոցների հաշվանցումը պետք է կատարեն միայն ծանուցագրերով՝ վավերացված կենտրոնական (ազգային) բանկի զինանշանի կնիքով:

ՀՈԴՎԱԾ 5

Միջպետական տնտեսական վեճերի լուծման նպատակով, որոնք չեն կարող ենթարկվել Համագործակցության պետությունների գերագույն տնտեսական (արբիտրաժային) դատարանների իրավասությանը, ստեղծել Համագործակցության Տնտեսական դատարան:

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գերագույն տնտեսական եւ արբիտրաժային դատարանները պետք է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների ղեկավարների Խորհրդի հերթական նիստի օրակարգ մտցնեն Համագործակցության Տնտեսական դատարանի կազմի վերաբերյալ առաջարկություններ եւ այդ Դատարանի Կանոնադրության նախագիծը:

Կատարված է Տաշքենդ քաղաքում 1992 թվականի մայիսի 15-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվներում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի վավերական պատճենը:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մայիսի 15-ից: